

ՆՈՅՆԵՆ ԵՂԱԵՒՆԻՈՅ

Հետեւեալ նամակը և յօդուածը շաբաթագրի մէջ հրատարակելու յատուկ խնդրանքով քանի մը պատուարժան անձինք մեզ ուղարկած ըլլալով՝ և այս օրուան թերթերն ու մէջ բաւական տեղ չի գտնուելով՝ զատ յաւելուածով յարգոյ հասարակութե հաղորդելու կը փութանք :

Վալաթիա 3/15 յուլիսի 1852

Յարգոյ տեաք Նոյեան Աղաւնայ

Նշեցնուան թերթին մէջ Սասի օրագիրը նամակ մը կը հրատարակէ Աղաւնայ Ս. Վարդապետէ ստորագրեալ և առանց թուականի : Այս նամակն որոշ հասկընալը թէպէտ դժուար է թիւ մը, մանաւանդ իւր վերջաւորութիւնը, բայց մենք, քանի մը անգամ և բոլորութեամբ, բայց մենք, քանի մը անգամ և խիստ ուշադրութեամբ կարդալով զայն՝ վերջապէս տեսանք որ երեք բան կըստուգէ նոյն նամակը, գուցէ և այն գործըն կամայր հաւանակ :

Առաջի յիշեալ նամակը կը ծանուցանէ ու կը հաստատէ

ա. թիւ Վերապատիւ Սոն. Հիւրօն չէ թէ միայն բանիւ, այլ մանաւանդ գրով խի յայտնած է հաւանակաւ խաղերէն գրքին բուն հեղինակներուն անունները, որ Հայ քահանայներէն են, և այս զանազան նամակներով զորոնք, եթէ չենք սխալիր, Վերապատիւ Սէրիլեան Պատրիարքին ուղարկած է որ հաղորդէ հասարակութեան :

բ. թիւ Սոն. Հիւրօն կը յայտնէ իր Պատրիարքին գրած թուղթերուն մէջ, որ վերոյիշեալ օրագրին նամակը ստորագրող Վարդապետը գրքին հեղինակներուն մէկն է, որ և Աղաւնայ վարդապետը չուրաւ նաք զայն իր նամակին մէջ :

գ. թիւ Հասուն Վերապաշտաւոր, իտալերէն գրքին հեղինակող գրողն է, վասն զի առանց իւր հրամանին իր գրքը, հաւատոյ վերաբերեալ այսպիսի գիրք մը յօրինելու և հրատարակելու կարող չէ : Սանաւանդ թէ, եթէ աղէկ ստուգած եմք, Սոն. Հիւրօն գրած թուղթերուն մէջ յիշուած է Վեր. Հասունին բուն գրչովը յօրինեալ մասերը :

Դ. թիւ երեք նիւթերս հասարակութեան հրապարակաւ ծանուցանող վերոյիշեալ Ս. Աղաւնայ վարդապետին նամակն է, որուն համար չորհակալ եմք իրեն : Սանաւանդ թէ Սոն. Հիւրօն առ Սէրիլեան Պատրիարքին գրած թուղթերուն հասարակութե չի կարգացուիլ յիշեալ նիւթերուն ճշմարտութեանը յայտնի ապացոյց է :

Վերոյիշեալ վարդապետին նամակին վրայ առ այժմ այս պարզ դիտողութիւններս միայն ընելով՝ մենք այն նամակը եղծելու բուն պատասխանը կը թողուք այն ճշմարտախօս անձին որ Սոն. Հիւրօնն ուղղակի լսած է խաղերէն գրքին հեղինակներուն անունները : Սանաւանդ որ Սոն. Հիւրօնն ուղղակի այն անունները լսող գեռ ուրիշ արժանահաւատ անձինք ալ կան :

Ար խնդրեմք, յարգոյ տեաք, որ մեր այս կարճառօտ նամակը այսօր Նոյեան Աղաւնայ մէջ հրատարակելու բարեհաճիք :

Ողջ լեւուք :

Ն. Ծ :

Ճշմարիտ ազգասէրը բնականաբար իր աղէկն ոչ խռովութեան պատճառ կըլլայ և ոչ երբեք կը հաճի : Առաջի երբոր խռովութիւն մըն ալ պատահի մէկէն խաղաղութիւնը կամ ի գործ դնելու և կամ դնել տալու կը ջանայ :

Առաջի ամիսէ մը ի վեր Արժանապարհ Սիւրբարեանց դէմ հրատարակուած պարսաւագրքին մը պատճառաւ եղած խռովութիւնը ջնջելու համար ի գործ դրուելու փոթեր երբ ձեռք առնուեցաւ՝ անմիջապէս յունիսի 10 երորդ օրը Յիսուս փրկիչ եկեղեցին ժողով մը եղաւ, ինչպէս որ արդէն յայտնի ըլլալով ամենուն նորէն հոս կրկնել յարգոյ ընթերցողաց ձանձուութիւն տալ է : Եւ մեր միտքը բուն երկրորդ ժողովքին նկարագրուած թիւնը ընել է :

Առաջի ժողովուրդը դարձեալ ժողովեցաւ վերոյիշեալ մայր եկեղեցին յունիսի 17 երորդ օրը որ էր երեքշաբթի, ու նոյն օրը 700 հոգիէն աւելի բաղկացեալ ժողովքին մէջէն 25 հոգի որոշուելով՝ անոնց հաւատարմութեանը յանձնուեցաւ որ իրենց ազգասիրութեամբ աղէկն կողմանէ, այն չոր նախանձ շարժեալ գրքին մէջի եղած անհիմն զրպարտութիւնները երեւան հանելով աղէկն իրաւունքները պաշտպանեն : Առաջի նոյն որոշումները, հաւատարմութիւնը մեծ գոհութեամբ ընդունելով ինչորեք յիշեալ աշխատատեղ անձինքն ընէ որ յարգապատիւ տէր Յովհաննէս Սէրիլեան Պատրիարքին երթալով ինչորեք իրմէ անարգելի խաղերէն գրքին վերաբերեալ Սոն. Հիւրօնն առ Պատրիարքն ուղարկեալ նամակը ու հասարակութեան առջև կարգան զայն, որուն մէջ (ինչպէս կարծեմք) յիշեալ Սոն. սինեօրը կը ծանուցանէ թէ խաղերէն գրքին հեղինակները իր թեմական իշխանութեթ տակ եղող քահանայներէն չեն, այլ այն հեղինակները Հռովմէական քանի մը հայ եկեղեցականներն են, և Տոն Վասպարօն նոյն գրքին գրագիրը եղած է միայն. ինչպէս որ Տոն Վասպարօն, Սոն. Սինեօրին տուած ձեռագրին օրինակը յայտնի կապացուցանէ, և նոյն նամակով կը փափաքի Սոն. Սինեօրը, որ հասարակութեան հաղորդէ զայն Պատրիարքը և դարձեալ կը յորդորէ զՊատրիարքը որ իր բարձր պաշտօնիւր ջանայ խաղաղեցնել զժողովուրդը :

Առանց ժամանակ կորսնցնելու վերոյիշեալ 25 անձինք իրենց մէջէն 4 հոգի խրկեցին աղէկաբար Պատրիարքին իմաց տալու ժողովուրդեան բաղձանքը : Իսկ Պատրիարքը (կերեւի թէ ժողովուրդեան կամքը կատարելու յօժարութիւն չունենալով,) նոյն նամակին կարգացուելու ուշացրնելու պատճառ կը փրնտրէր ըսելով թէ նամակը թարգմանութեան տրուած է : Եւ պատասխաններ է թէ պէտք չէ նորէն վաղը բոլոր ժողովուրդը հոս գումարել, այլ այն որոշուած 25 անձինքը միայն հրաման գան Պատրիարքարան վաղուան օրը որ կարգայ անոնց նամակը, մանաւանդ և խոստացեր է որ տայ իրենց նոյն նամակին թարգմանութիւնը ու բուն խաղերէն ալ ցուցնէ իրենց : Արդ այս աղիւսական անձինքը, այս պատասխանը առնելով եկան իսկոյն ծանուցին զայն ժողովրդեան : Առաջի ժողովուրդն ալ դժգոհութիւն չի ցուցնելով

եղաւ եկեղեցիէն, Պատրիարքին խօսքին հաւատարմութիւն ընելով :

Ինչպէս 8 օր առաջ եղած ժողովքին ինքնահամ տուեր էր Պատրիարքը այն արտաբայ գրքին շինծու հեղինակ Տոն. Վասպարօն յուղարկած նամակը, և Տոն. Վասպարօն առ նամակին նիւթը ուսկից ստացած և ինչ ճամբով գրած ըլլալը արդէն ժողովրդեան ականջը հասած ըլլալուն համար՝ հոս բացայայտ դնելը աւելորդ կը համարինք : Վասն զի առ նանկ կերեւի թէ գործքը ժամանակաւ ինքնիւրեն պիտոր յայտնուի :

Այս մասին մէջ հաւանական կերեւայ թէ այս նամակը բուն Տոն. Վասպարօն գրուած ըլլալուն Վեր. Պատրիարքն ալ խաբուած ըլլայ : Վասն որոյ և ժողովրդեան ծանուցանելու զայն փութացեր է :

Հիմայ գանք երկրորդ օրուան որ յունիսի 18 էր : Վերոյիշեալ 25 աղիւսական անձինքը, ինչպէս որ խոստացուած էր, ժամը 8 ին Պատրիարքարան գացին Պատրիարքին սրբազնութեանը ներկայանալու, որպէս զի առջի օրուան նամակին թարգմանութիւնը լսեն ու միանգամայն ականատես ըլլան Արհիպատիւ և ճշմարտասէր Սոն. Հիւրօնին բուն իսկ նամակին : Բայց ասոր փոխարէն, Բարձրագոյն դռնէն Պատրիարքին եկած անակնուկէ գոյն դռնէն Պատրիարքին սոսկ օրինակը կարդացուց իւրենց Պատրիարքը, որու մէջ հրամայված է այն գարշելի գրքին վերնալը ու անոր վերաբերեալ խօսակցութեանց դադրելը : Սակայն թուի մեզ, թէ Բարձրագոյն դռնէն եկած պատուէրը Սոն. Սինեօրին նամակը չի կարդալու համար Պատրիարքին ունեցած դիտաւորութեթ համեմատ գալով՝ իրեն շատ հաճոյ անցած պիտոր ըլլայ : Վասն զի կերեւի թէ Բարձրագոյն դռնէն այսպիսի պատուէր մը գալիքը կը յուսար Պատրիարքը : Առաջի իրեն գալիքը կը յուսար Պատրիարքը : Առաջի իրեն գալիքը պատուաւոր 25 անձինք այս պատուէր լսելուն պէս Բարձրագոյն դռան հրամար լսելու հնազանդելով, անմիջապէս եկան ու ժողովրդեան իմացուցին զայն :

Սնայ որ, ժողովրդեան մէջ ըստ մեծի մասին եղած զարմանքը այս էր թէ Աղաւնայ վարդապետը բարեպետ գերապատիւ Պատրիարքը խիստ աճապարեց Տ. Վասպարօնն առ մակը ժողովրդեան կարգաւոր, բայց ինչպէս կըլլայ որ պարզ քահանայ մը նամակը յօժարութեամբ կարգայ, ու անկէ գերագոյն Հռովմայ Եկեղեցիին կողմանէ Պօլսոյ մէջ գտնուող Աղաւնայական փոխանորդի Արհիպատիւ Սոն. Հիւրօն Արքեպիսկոպոսին խրքեալ ճշմարտախօս նամակը չընթեռնու ու զանց առնէ : Հատ զարմանալի է այս և մեզ կը թուի թէ Պատրիարքին այս մասին լուրութիւնը Սոն. Հիւրօն մեծ պատիւ մը ըրած չըլլար, որն որ կրնայ ուրիշ կերպ հեռանկարներ ունենալ :

Ն. Ծ :